

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for sponsoring the publication of this volume

**Մատենադարան**  
**Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և**  
**«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը**  
**երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին**  
**սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**34**

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**34**

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**34**

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են  
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԾԱՆԵՐԸ ՀԱՅ-ՄՈՆԴՈԼԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)<sup>1</sup>**

*Բանալի բառեր՝ Կիլիկյան Հայաստան, Մեծ մոնղոլական տերություն, Իրանի մոնղոլական Իլխանություն, «իշխանության տվչություն», յառլիկ, փայզա, դիվանագիտական նվիրաբերում:*

**Գ. Դիվանագիտական ընծաները հայ-մոնղոլական հարաբերություններում.**

«Յայնժամ Մուղալ՝ ազգն շարժեալ  
Զամենեսեան՝ ի սուր մաշեալ,  
Մեր արհայիս՝ պարզև յղեալ,  
Եւ մեծապէս՝ շնորհակալեալ»<sup>2</sup>:

1246 թ. Սմբատ Սպարապետի և 1254 թ. Հեթում արքայի Կարակորում կատարած ուղևորություններով հայ-մոնղոլական հարաբերությունները ձեռք բերեցին, ինչպես արդի պատմագիտության մեջ են հաճախ բնորոշում, «դաշնակցային» բնույթ: Այնուամենայնիվ, մոնղոլական աշխարհակալական գաղափարաբանության համաձայն՝ Թեմուչինը՝ ապագա Չինգիզ խանը, ու նրա հետնորդներն իրենց իշխանությունը շնորհ էին ստացել երկնքի աստվածությունից՝ Թենգրիից<sup>3</sup>: Այդ առանձնաշնորհումով նրանց լեգիտիմ լիազորություն էր տրվում իշխելու և կառավարելու մյուս բոլոր երկրներն ու ժողովուրդներին

\* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.թ., gagidaniel@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ սեպտեմբերի 15, 2022, գրախոսելու օրը՝ նոյեմբերի 15, 2022:

<sup>1</sup> Հոդվածի Ա և Բ մասերը տե՛ս ԲՄ, 33, էջ 5-32:

<sup>2</sup> Վահրամայ Բաբունայ Ոստանաուր պատմություն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 235:

<sup>3</sup> I. de Rachewiltz, “Some Remarks on the Ideological Foundations of Chingis Khan’s Empire,” in *Papers on Far Eastern History*, № 7, 1973, pp. 21-36.

կամ, ինչպես Կիրակոս Գանձակեցին է ձևակերպել, «...զարբայն իւրանց ազգակից Աստուծոյ, զերկինս առեալ Աստուծոյ իւր բաժին եւ զերկիրս տուեալ խաղանին»<sup>4</sup>: Այս գաղափարաբանության համաձայն առանձնացվում էր մոնղոլների հետ հարաբերությունների երկու կարգավիճակ՝ «հնազանդության» և «պատերազմի»: Առաջինը բնորոշվում էր մոնղոլներեն *el* (թյուրք.՝ *il*) բառով և նշանակում էր «հպատակություն» կամ «խաղաղություն», իսկ երկրորդը՝ *bulğa* բառով, որ նշանակում էր «ըմբոստություն», «անհնազանդություն»<sup>5</sup>: Հետևապես հայ-մոնղոլական քաղաքական առնչությունները միանշանակորեն բնութագրելի են «ստորակա-գերակա» փոխհարաբերությամբ՝ լավագույն դեպքում «գործակցային», «բարեկամական» մակդիրներով, բայց հազիվ թե կողմերի հավասարազորություն կամ իրավահավասարություն ենթադրող «դաշնակցային» մակդիրով:

Միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկություններից երևում է, որ մոնղոլ խաները գիվանագիտական ընծաներ են փոխանակել միայն այն հզորագույն տիրակալների հետ, որոնց իրենց գրեթե հավասար կամ համապատասխան են համարել: Մոնղոլների տիրապետությանն իրենց հնազանդությունը հայտնած միապետներն իրենք էին նրանց գահակալներին շքեղ նվերներով պարբերաբար «հաճոյանալու» պարտավորություն ստանձնում, որը սովորաբար ենթակայության խորհրդանիշ՝ հարկատեսակ էր ընկալվում և կարող էր ամենևին էլ պատասխան նվեր չենթադրել<sup>6</sup>: Նույն կերպ և հայոց գահին նստած յուրաքանչյուր միապետ գահընկալումից անմիջապես հետո շտապում էր մեծամեծ ընծաներով ներկայանալ Իլխանության գահակալին՝ նրանից «իշխանության տվչություն» խնդրելու: Միայն մոնղոլական իշխանություններից «յառլիկ» («յառլախ») ստանալուց հետո էր հայոց գահակալը կառավարման լեգիտիմություն ստանում:

<sup>4</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, շախատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Յանջանյանի, ՀՄՍՖ ԳԱ հրատ., Երևան, 1961, էջ 233: Մոնղոլական տիեզերակալության հայկական ընկալումների մասին ավելի մանրամասն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, հ. Բ, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն (Հայկական մատենաշար Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան), Երևան, 2007, էջ 18-21:

<sup>5</sup> P. Pelliot, “Les Mongols et la papauté”, *Revue de l’Orient chrétien*, t. 23, 1922–1923, p. 26, *ինչպես նաև* t. 24, 1924, p. 322-323 A. Mostaert, F. W. Cleaves, “Trois documents mongols des Archives secrètes vaticanes”, *Harvard Journal of Asiatic Studies*, vol. 15, № 3/4, 1952, pp. 492-493: Մոնղոլական գաղափարաբանության ֆննարկումը մամուլ-մոնղոլական հակամարտության համատեքստում տե՛ս R. Amitai-Preiss, “Mongol Imperial Ideology and the Ilkhanid War against the Mamluks”, in *The Mongol Empire and Its Legacy*, ed. by R. Amitai-Preiss, D.O. Morgan, Leiden-Boston-Köln, 2000, pp. 58-72:

<sup>6</sup> Q. Yihao, “Gift-Exchange in Diplomatic Practices during the Early Mongol Period”, *Eurasian Studies*, vol. 17, 2019, pp. 202-227.

Հայ-մոնղոլական հարաբերությունների առանձնահատկությունը դիպուկ է բնութագրել Գրիգոր Ակնեբցին՝ «դաշինք սիրոյ եւ հնազանդութեան»<sup>7</sup>: Որպես մոնղոլների վասալ՝ հայոց թագավորությունը տարեկան հարկ վճարելուց բացի<sup>8</sup>, այլ պարտավորություններ էլ ուներ մոնղոլների՝ մասնավորապես Իլխանության նկատմամբ՝ պարբերաբար կազմակերպվող արշավանքներին օժանդակ զորքերի տրամադրում և պարենային ապահովություն, ինչպես նաև թանկարժեք ընծաների մատուցում<sup>9</sup>:

Հայոց արքաների և մոնղոլ խաների միջև դիվանագիտական նվերների և ընծաների փոխանակման վերաբերյալ տեղեկությունների հիմնական աղբյուրը հայ պատմագրության հուշարձաններն են: Ընդ որում, մոնղոլ խաներին մատուցված դիվանագիտական ընծաների մասին առաջին հիշատակությունները վերաբերում են հայ-մոնղոլական մերձեցման առաջին իսկ փորձերին՝ Սմբատ Սպարապետի և Հեթում թագավորի՝ համապատասխանաբար Գույուկ (1246-1248 թթ.) և Մոնգկե (1251-1259 թթ.) խաների արքունիքներ կատարած «դիվանագիտական գործուղումներին»<sup>10</sup>, Բաշու նոյինի հետ հաստատած դրացիությանը: «Նա յառաջագոյն առաքեաց զեղբայրն իւր զՍմբատ, որ զօրավարն էր նորին, առ դանն Գիուգ ընծայիւք և պատարագօք, և դարձաւ ի

<sup>7</sup> Գրիգոր Ակնեբցի, Պատմութիւն թաթարաց, Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1974, էջ 31:

<sup>8</sup> Հայոց թագավորության հարկային բեռը շատ ծանր չէր, մյուս մոնղոլահպատակ երկրների հետ համեմատությամբ՝ նույնիսկ կարելի է ասել խորհրդանշական: Ըստ մոնղոլական Իլ-խանության պետական գործիչ և պատմիչ Համդալլահ Ղազվինիի 1336 թ. գրված *Nuzhat al-qulūb* («Սրտերի զվարճություն») երկի, որում աշխարհագրական տեղեկություններին զուգահեռ նաև հպատակ երկրների՝ իր պետության գանձարան վճարած հարկաչափերի մասին տվյալներ է ներառել ֆինանսական հարկամատյաններից, Կիլիկյան Հայաստանի վճարած հարկաչափը 30 հզ. դինար (3 թուման) է եղել: Տե՛ս **Hamd Allāh Qazwīnī**, *Nuzhat al-qulūb*, §. 100, ինչպես նաև *The geographical part of the Nuzhat-al-Qulūb composed by Hamd-allah Mustawfi of Qazwīn in 740 (1340)*, tr. by G. Le Strange, Leiden-London, 1919, p. 100: Որպեսզի պարզ լինի այս հարկաչափի շնչինությունը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ, օրինակ, Ռումի (*molk Rūm*) վճարած հարկը նույն երկում 3.300.000 է նշված (տե՛ս նույն տեղում, p. 95), Վրաց թագավորությանը (*belād Abhāz wa-Gurğestān*) 1.202.000 (տե՛ս նույն տեղում, p. 94), բուն Հայաստանինը (*Armīnya al-akbar*) 390.000 դինար, թեև նշվում է, որ նախկինում Հայաստանից ստացվող հարկաշահույթը 2.000.000 է եղել (տե՛ս նույն տեղում, p. 94):

<sup>9</sup> Լ. Տեր-Պետրոսյան, *հաշակիրները և հայերը*, հ. Բ, էջ 305-315:

<sup>10</sup> Մոնղոլական արևունիքներ բուն Հայաստանի և Կիլիկյան Հայաստանի եկեղեցական և ֆառակական գործիչների կատարած այցելությունների թեմայով ընդհանրական հոդված ունի Կլ. Մութաֆյանը: **Cl. Mutafian**, “Visites arméniennes aux souverains mongols (1240-1305)”, *Mélanges Jean-Pierre Mahé*, ed. A. **Mardirossian**, A. **Ouzounian**, C. **Zuckerman**, Paris, 2014, p. 473-488:



նման է պատուով և հրովարտակօք ընդունելութեան»<sup>11</sup>, – գրում է նույն հեղինակն արդեն Սմբատի դիվանագիտական առաքելության մասին: Գրեթե նույնը Գրիգոր Ակնեցցին է գրում Հեթումի դեսպանագնացության մասին. «... ապա վասն սիրոյ ֆրիստոնէից, ես առաւել վասն իւր սեփական երկրիս, գնաց բազում գանձիւք առ Մանկու Ղանն, եւ հոգաց շրոդոյ յերկրիս իւր զայսպիսի բարկութիւնս»<sup>12</sup>: Մանգու խանին Հեթումի տարած ընծաների փառահեղության մասին է վկայում թեկուզ այն հանգամանքը, որ վերջինս Սուրբ ճանապարհի վերջի անվտանգության նկատառումներով նվերներն իր հետ չի վերցրել: Ինչպես արդեն վերևում գրել ենք, ըստ Սմբատի և Կիրակոս Գանձակեցո՛ւ նա հասել է Արագածոտնի Վարդենիս գյուղ և իջեանել Քուրդ Վաչուտյան անունով հայ իշխանի տանը, մինչև որ հայրը՝ Կոստանդին Գունդստաբլը, պատրաստել է ծանրաբեռն նվերները և ուղարկել նրա հետևից<sup>13</sup>: Նույն Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Հեթումը «բազում ընծայիւք եւ զօրօք սպասաւորութիւն կատարէր Բաշու-նուխին եւ զօրացն՝ որ ընդ նմա, մինչև թուղթ գոհութեան եւ զովութեան գրեալ վասն նորա առ Հուլաւուն»<sup>14</sup>: Հետագու, հայոց արքաները ծառայելու պարտավորություն ստանձնեցին Հուլաղուի և Իրանի տարածքում նրա հիմնադրած Իլխանության մոնղոլ տիրակալների նկատմամբ՝ իրենց անվերապահ հավատարմությունն ի շարս այլնի ժամանակ առ ժամանակ ապացուցելով նաև մատուցած թանկարժեք նվերներով: «Իսկ լուեալ զայս բարեպաշտ թագաւորն Հայոց Հեթում, թէ Հուլաւունն ղան նստաւ, եւ այնպէս բարէսէր է եւ ֆրիստոնասէր, ապա եւ ինքն Հայոց թագաւորն գնաց յարեւելք բազում ընծայիւք, եւ ետես զՀուլաւու Ղանն»<sup>15</sup>, – հաստատում է Գրիգոր Ակնեցցին:

Մոնղոլական իշխանությունների պատասխան նվերները սովորաբար նույնքան շքեղ չէին, որքան հայոց արքաների մատուցածները: Դրանք, կարելի է ասել՝ «խորհրդանշական» կամ «արարողակարգային» էին: Դրանք սովորաբար ներառում էին Կրիկիո միապետների իշխանությունն ընդունող փաստաթուղթ՝ «յառլիկ» (կամ «յառլախ»), ինչպես որ հայկական աղբյուրներում են վկայված) և «փայզա»<sup>16</sup>, երբեմն արքայական հանդերձներ կամ էլ, ինչպես մոն-

<sup>11</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 364 և հմմտ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար (հետայսու՝ ՀԶԶ, ԺԳ դար), կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 238:

<sup>12</sup> Գրիգոր Ակնեցցի, Պատմութիւն թաթարաց, էջ 37:

<sup>13</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, աշխատախրոպեամբ Հ. Սերոբէ Ագրլեանի, Վենետիկ, 1956, էջ 230 և առավել մանրամասն՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 364-365:

<sup>14</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 376:

<sup>15</sup> Գրիգոր Ակնեցցի, Պատմութիւն թաթարաց, էջ 46:

<sup>16</sup> Ստեփանոս Օրբելեանի բացատրությունն ամենաբնորոշիչն է. «Փայիզայ ոսկի, որ էր տախտակ ի շափ թղթոյ միոյ եւ կիտոյ գրեալ ի վերայ զանուն Աստուծոյ եւ Ղանին եւ այլ սակաւ բանն»: Տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արք եպիս-

ղոլական ավանդույթն էր պահանջում, մոնղոլ կին, որոնք երեքն էլ հպատակութեան, վասալութեան խորհրդանիշ էին: Սմբատ Սպարապետը, օրինակ, Կարակորումից վերադարձել է մի մոնղոլ կին «նվեր» ստանալով: Գրիգոր Ակներցին այս պատիվների ստացումն այսպես է բնորոշում. «Եւ տուեալ մեծ իառախ, եւ փայլզայս ոսկիս, եւ տաքար խաթուն պախտախատուր» (իմա՝ «գդակավոր»), զի այն էր նոցայ մեծ սէրն, որ գով սիրէին և մեծարէին տային կին ի պատուաւոր կանանցն իւրեանց»<sup>17</sup>: Այս մոնղոլուհուց Գունդստաբլն անգամ որդի է ունեցել՝ Վասիլ Թաթար անունով, որը Հեոն արքայազնի հետ 1265 թ. գերեզարկել է Եգիպտոս և նրա հետ էլ ազատվել գերությունից<sup>18</sup>:

կոպուսի Սրենեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կ. Վարդապետ Շահնազարեանց, հ. Բ, Փարիզ, 1859, էջ 231: Սա, ըստ էության, խանի անունը կրող մետաղյա կամ փայտյա տախտակ է՝ յուրատեսակ «անցաթուղթ» կամ «պատվաթուղթ», որը երաշխավորում էր այն ստացողի (այդ թվում դեսպանների և բանագնացների) անվտանգ անցումը մոնղոլահպատակ տարածքներով կամ խանի շնորհած որևէ արտոնություն: Ըստ Ռաշիդ ալ-Դիհնի՝ փայզաների և յադիկների տրման, դրանց փոխանակման և վերադարձի, դրանց վրա «տամդա»-ների (կնիքների) դաշման ընթացակարգը կանոնակարգվել է Վազան խանի օրոք և նրա հրովարտակով: Այս մասին տե՛ս *Rašid al-Dīn, Čāmi' al-Tawārīh*, ց. 1, be-kūšēš-e Bahmān Karīmī, Eqbāl, Tehrān, 1960, ց. 1061-1065 և *Рашид-ад-Дин, Сборник летописей*, том III, пер. А. К. Арендса, под ред. А. А. Ромаскевича, Москва-Ленинград, 1946, с. 275-280:

<sup>17</sup> Գրիգոր Ակներցի, Պատմութիւն Թաթարաց, էջ 32:

<sup>18</sup> Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 244, 247-248: Հատկանշական է, որ Կարակորում մեկնելու ժամանակ Սմբատն արդեն կին ուներ՝ Թեոֆանո անունով, որի մասին հայտնում է 1268 թ. գրված ճաշոցի շափածո հիշատակարանում.

«Ձի յիշատակ ինձ եղիցի,

Տրուպ եւ անգեղջ մեղատորի

Սմբատա Գունդստապլի,

Հար իմոյ Կոստանդինի,

Եւ մար իմոյ տամ Ավիծի,

Եղբարց եւ ևերց, նաեւ ազգի,

Ձնոյն եւ որդոց իմում գկնի՝

Հեթմոյ, Աւշնի, եւ Կոստանդինի,

Եւ մար սոցին Թեֆանաւի: Տե՛ս *ՀԶ, ԺԳ դար*, էջ 362-363: Հետաքրքիր է, որ միջնադարյան հայ իրավունքն ու եկեղեցին մերժում և դատապարտում էին երկկնություն և բազմակնության երևույթը: Այնուամենայնիվ, ինչպես երևում է, ազնվական դասի ներկայացուցիչներն ու արհունի մեծամեծերն ինչ-որ կերպ խուսանավել են այդ արգելից՝ հիշյալ արարի՝ ֆադախական նկատառումներով պայմանավորված լինելու մասին պատրվակներ ներկայացնելով: Գույուկ խանից ստացած մոնղոլումիս, հետևաբար, ոչ թե կին է համարվել, այլ հարև, իսկ վերջինից ունեցած որդին՝ արտամուսնական կապից ծնված զավակ: Նա հավանաբար հենց այս պատճառով չի հիշատակվել վերոբերյալ հիշատակարանում, չնայած որ 1268 թ. դեռ ողջ էր: Վասիլին ու եղբայրներից՝ Հեթումին, ինչպես հայրն է վկայում, 1264 թ. «ձխտրեցուցին» («ձխավոր») են դարձրել, «ասպետ» են կարգել: Տե՛ս *Սմբատ Սպարապետ, Տարեգիրք*, Վենետիկ, էջ 244: Մի ֆանի տարի անց՝ 1269 թ. հոկտեմբերին, Վասիլն անհայտ պատճառով մահացել է և թաղվել Մլինի վանքում: Տե՛ս նույն տեղում, էջ 252:

Կիլիկյան Հայաստանի հետ առնչություն չունի, բայց այս երևույթի ևս մի օրինակ է նաև այն, որ Վրաց թագավորության աթաբեկ Ավագ Զաքարյանը, 1240-1241 թթ. մեծ խան Ուգեդեյին (կառ. 1229-1241 թթ.) այցելելով, նույնպես Կարակորումից վերադարձել է իր հետ «կին ի թաթար ազգէն» բերելով<sup>19</sup>:

Նվիրաբերման տեսակ էր նաև մոնղոլական իշխանությունների հետ կիս-վող ռազմավարը: Նման մի տեղեկություն տալիս է Բար Հեբրեոսն իր «Եկեղեցական ժամանակագրության» մեջ, որ վերաբերում է Հուլաղուի արքունիք իր իսկ կատարած ուղևորությանը և նրա մոտ ընդունելությունը: Ասորի մաֆրիանը մոնղոլ խանին ներկայացել է Հյուսիսային Ասորիքի բնակավայրերի դեմ հայոց արքա Հեթումի ձեռնարկած արշավանքի (1264 թ.) հաջողության մասին ավետիսով. «Ուրդու հասնելու հենց նույն օրը նա<sup>20</sup> ընդունվեց արֆայից արֆա Հուլաղուի մոտ: Տեղեկացրեց նրան, որ հայերը գրավել են Սարվին ֆաղաբը եգիպտացիներից և մեծ ֆանակությամբ ավար բերել՝ այդ թվում՝ մեծ թվով ստրուկներ ու ստրկուհիներ, և որ դեսպանները շուտով կժամանեն՝ Ուրդուին հասանելիք ավարամասը մատուցելու: Արծիվը (նկատի ունի Հուլաղուին) շատ ուրախացավ՝ այս լուրը լսելով»<sup>21</sup>:

1265 թ. դեռ Հուլաղու իլխանի կենդանության օրոք Թավրիզ գնացած, և նրա մահից հետո նոր իլխանի գահընկալման առիթով գումարված կուրուլտայի («մեծ ժողով») ժամանակ դեռ այնտեղ գտնված Վարդան Արևելցին վկայում է, որ մոնղոլների համար տոնական համարվող այդ օրերին մոնղոլահպատակ բոլոր միապետներն այցի էին գալիս իրենց նորընծա գերակային՝ «շատ և երևելի նուիրօ՞ թագաւորք և սուլտանք. որպէս և ի մեր տեսն թագաւորն Հայոց Հեթում, և թագաւորն վրաց Դաւիթ և Բրինձն Անտաբու, և սուլտանք ի Պարսից կողմանց յոլով»<sup>22</sup>:

Իլխանական արքունիքին մատուցվող նվերները սոսկ հնազանդության և նրա քաղաքական գերակայության ճանաչման առհավատշյա չէին: Հայկական իշխանությունները շատ հաճախ դիվանագիտական թանկարժեք ընծաների էին դիմում որևէ հստակ խնդրով ուրդուի բարեհաճությունը շահելու նպատակով:

<sup>19</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 263, Վրաց ժամանակագրություն (1207-1318), թարգ. հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագր. Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 96-97:

<sup>20</sup> Պատմիչը հենց իրեն նկատի ունի: Նա ասորի հակորիկյան եկեղեցու մաֆրիանի պաշտոնն զբաղեցրել է 1264-ից 1286 թ.:

<sup>21</sup> Bar Hebraeus, *Ecclesiastical Chronicle: An English Translation*, tr. by D. Wilmshurst, Piscataway, 2016, p. 272: Տե՛ս նաև Լ. Յ. Տե՛ր-Պետրոսեան, Ասորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԹ-ԺԳ դարերում (Հայագիտական Մատենադարան «Քաղմավեպ» 28), Վենետիկ, Ս. Ղազար, 1989, էջ 75:

<sup>22</sup> Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, լուսաբանեալ աշխատասիրութեամբ Գ. Արշանի (Մատենագրութիւնք նախնեաց: Պատմագիրք հայոց), Վենետիկ, 1862, էջ 156:

Այս դեպքում ընծաները հանդես էին գալիս որպես կաշառք կամ դահամունք: Օրինակ, մամլուքյան պատմիչ Բադր ալ-Դին ալ-Այնին գրում է, որ հայոց արքա Հեթումը Բեհենի բերդին «նվերներով» է տիրել. «Այն [նախկինում] Հալեպի տարածքների մաս էր, – գրում է նա, – պատկանում էր մուսուլմաններին, և նրա վրա իշխողը Հալեպի տեր ալ-Մալիֆ ալ-Նասիրն էր: Այդպես էր, քանի դեռ Հուլավուն չէր մտել Հալեպ և գրավել բոլոր երկրները<sup>23</sup>: Երբ թաֆթուր՝ Սպի տերը, իմացավ, որ Հուլավուն այն [նույնպես] գրավել է, նրա մոտ գնաց



«Մարկո Պոլոն մոնղոլ Մեծ հան Դուբիլայից ոսկյա փայլա է ստանում» © Bibliotheque nationale de France. Département des Manuscrits, Français 2810 (ԺԵ դ.), ք. 3բ  
(Ժողովածուն ի թիվս այլ նյութերի պարունակում է Հեթում Կոռիկոսցու «Մաղիկ պատմութեանց»-ը):

և նվերներով շողոփորթեց, գումար տարավ նրան՝ խնդրելով, որ Բահասնան (Bahasnā) իրենը լինի, և նա էլ հանձնեց նրան»<sup>24</sup>:

Եվս մի օրինակ: 1266 թ. մամլուքյան սուլթան Բայբարս ալ-Բունդուկդարին ավերիչ արշավանք է կազմակերպում Կիլիկյան Հայաստանի դեմ: Այս արշավանքը, ինչպես վերևում ենք նշել, ողբերգական հետևանքներ է ունենում հայոց թագավորության և անձնապես հայոց թագավորի համար: Վերջինս այդ ժամանակ բացակայում էր երկրից, քանի որ մեկնել էր մոնղոլների մոտ՝ նրան-

<sup>23</sup> Խոսքը մոնղոլների 1260 թ. «ասորիփյան արշավանքի» մասին է:

<sup>24</sup> **Al-'Aynī**, *Iqd al-ğumān fi tāriḥ ahl al-zamān*, ց. 3, bi-taḥqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Qāhira, 1989, ք. 151-152.

ցից երկրի պաշտպանություն համար օժանդակ ուժեր հայցելու<sup>25</sup>: Բազմաթիվ գերիների թվում պատանդվում և Կահիրե է տարվում նաև Հեթումի գահաժառանգ որդին՝ Լևոնը: Հեթումն անհապաղ բանակցություններ է սկսում սուլթան Բայբարսի հետ: Երկար դիվանագիտական խուսանավումներից հետո սուլթանն ի վերջո առաջադրում է իր պահանջը: Նա Լևոնի ազատության դիմաց պահանջում է գտնել և իրեն փոխանցել մոնղոլական գերություն մեջ գտնվող իր մտերիմ և զինակից մի մամլուքի՝ Սունկուր ալ-Աշկար անունով: Բայբարսի որոնված Սունկուր ալ-Աշկարին գտնելու և իր գահաժառանգ որդուն գերությունից ազատելու համար Հեթումը, պարզ է, որ ոչինչ չէր խնայելու և ոչնչի առաջ կանգ չէր առնելու: 1267 թ. Հայոց արքան մեծամեծ նվերներով, ինչպես Գրիգոր Ակներցին է գրում, մեկնում է Աբաղա իլխանի արքունիք՝ որդու ազատության դիմաց իրեն ներկայացված պահանջը քննարկելու. «Ջայս լուեալ թագաւորն Հայոց ի դեսպանացն, (եւ) իսկոյն զուգեաց բազում գանձս և պատուական ինչս, եւ գնաց յարեւելք առ Աբաղայ Ղանն»<sup>26</sup>: Դեպքերի մասին գրում է նաև Սմբատը: Ըստ նրա Հեթումը՝ ներկայացել է Աբաղա իլխանին և «խնդրեաց զխօշտաշն Պեկպարս սուլտանին...և ոչ գտանեին գնա: Եւ դարձաւ թագաւորն տրամութեամբ և եկն յաշխարհն իւր, և առաքեաց առ սուլտանն եթէ, ոչ գտի. և սուլտանն մոմոեալ ասէր, եթէ գնա ոչ բերցէ՛ զորդի նորա ոչ ազատեցից»<sup>27</sup>: Ըստ Բար Հեբրեոսի՝ Աբաղա խանը հորդորել է իր առաջ հեկեկացող Հեթում արքային իր երկիրը վերադառնալ՝ խոստանալով, որ ինքը կգտնի և նրա մոտ կուղարկի Սունկուրին<sup>28</sup>: Երկար որոնումներից հետո Սուն-

<sup>25</sup> Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, էջ 54 *Les gestes des Chiprois*, ed. G. Raynaud (Publications de la Société de l'Orient Latin. Série historique 5), Geneva, 1887, p. 181, ինչպես նաև *The 'Templar of Tyre', Part III of the 'Deeds of the Cypriots'*, ed. by P. Crawford, Aldershot, 2003 (London & New York, 2016), p. 52:

<sup>26</sup> Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, էջ 61:

<sup>27</sup> Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վեներիկ, էջ 249: Այս դեպքերի մասին բազմաթիվ մամլուքյան պատմիչներ են գրում, բայց մյուսների մոտ չհանդիպող մի պատմություն է տալիս ալ-Յունինի պատմագիրը: Ըստ նրա՝ հայոց արքան Աբաղայի մոտ գնալիս իրեն ուղեկից է վերցրել ալ-Ջահիր Բայբարսի ուղարկած դեսպաններից մեկին՝ Բահրի էմիր Ալամ ալ-Դինին, ում անձը չբացահայտելու համար հայկական հագուստներ (*zayy al-arman*) են հագցրել: Վերջինս իբր Աբաղայի արժունիքում հանդիպել է Սունկուր ալ-Աշկարին և համոզել, որ ինքն իսկպպես ուղարկվել է Բայբարսի մոտից: Սունկուրը համաձայնել է հայկական հագուստներ հագնելով փախչել Աբաղայի արժունիքից: Երբ Կիլիկիա են հասել, Ալամ ալ-Դինը վերադարձել է Կահիրե՝ սուլթանին հայտնելու նրա «խտրաշին» գտնելու մասին լուրը, որպեսզի պատրաստվի Լևոնի հետ նրա փոխանակությանը: Տե՛ս *al-Yūnānī, Dayl* (Ḥaydārābad), ց. 2, ց. 385:

<sup>28</sup> *The Chronography of Gregory Abū'l-Faraj (Bar Hebraeus)*, the Son of Aaron, the Hebrew Physician, the first part of his Political History of the World, vol. I, trans. Ernest A. Wallis Budge, London, 1932 (Piscataway, 2003), p. 447.

կուր ալ-Աշկարն, ի վերջո, գտնվում է<sup>29</sup>, և կողմերը սկսում են պատանդների փոխանակման շուրջ բանակցություններ<sup>30</sup>: Վերադառնալուց հետո (1268 թ.) Լևոնը վանք մտած և կարճ ժամանակ անց (1270 թ.) մահկանացուն կնքած հոր փոխարեն նստում է թագավորական գահին (Լևոն Բ, 1269-1289 թթ.): Մինչ այդ, սակայն, ուղևորվում է Աբաղա իլխանի մոտ՝ «առեալ հրաման վասն թագաւորելոյ իւր»<sup>31</sup>: Ըստ Սմբատ Սպարապետի՝ Լևոնը լավ ընդունելություն է գտնում Աբաղայի մոտ՝ թանկագին պարգևների արժանանալով. «Խ սոյն ամի պարոնն Հայոց Լեոն, գնաց յարեւելս առ խանն Ապաղա, և նա ընկալաւ գնա մեծարանօֆ, և բազում պարգևօֆ դարձոյց յաշխարհն իւր Կիլիկիա»<sup>32</sup>:

Մամուլքյան պատմիչներ Իզզ ալ-Դին իբն Շադդազն ու ալ-Յունինին իրենց երկերում մի շատ արժեքավոր հաղորդում են պահպանել, որը, ճիշտ է, Կիլիկյան Հայաստանի և Իլխանության պաշտոնական հարաբերություններին չի վերաբերում, այնուամենայնիվ, հաջողությամբ տեղավորվում է հայ-մոնղոլական հարաբերությունների շրջանակում: Խոսքը 1275 թ. Աբաղա իլխանի կողմից Ռումի գործերի վերաբերյալ խորհրդակցությունների նպատակով իլխանական արքունիք կանչված Ռումի սուլթան Ղիյաս ալ-Դինի և Իկոնիայի նոր վերատեսուչ նշանակված Թալու-Նոյինի դեսպանագնացության մասին է: Նրանց ուղեկցողների թվում էր Երզնկայի Սարգիս արքեպիսկոպոսը, որը, ինչպես վերևում ենք նշել, մեծ համբավ և հարգանք էր վայելում իլխանական արքունիքում, և անգամ անձնական մտերմություն ուներ իլխան Աբաղայի հետ<sup>33</sup>: Իզզ ալ-Դին իբն Շադ-

<sup>29</sup> Ըստ Բար Հեբրեոսի՝ Սունկուրին գտել են Միջին Ասիայի խորհրում՝ Սամարղանդում: Տե՛ս **Bar Hebraeus, Chronography**, p. 447, ինչպես նաև **Ibn al-ʿIbrī, Tārīḥ muḥtaṣar al-duwal, al-ṭabʿ a al- ʿāniya, bi-taḥqīq Anṭūn Ṣāliḥānī al-Yasūʿī, Bayrūt, 1994, ք. 500**: Գրիգոր Ակնեցցին էլ շարունակում է, որ Սունկուրին Կիլիկիա է բերել Հեթումի եղբորորդին: Տե՛ս **Գրիգոր Ակնեցցի, Պատմութիւն թաթարաց, էջ 61**: Սմբատի վկայությամբ՝ խոսքը վերջինիս Լևոն որդու (ապագա գունդաաբլ) մասին է, ում վատահվել է նաև Սունկուր Աշկարին Լևոն արհայագնի հետ փոխանակելու առաջնությունը: Տե՛ս **Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 249, 251**:

<sup>30</sup> *Les gestes des Chiprois*, p. 191, ինչպես նաև *Deeds of the Cypriots*, p. 59:

<sup>31</sup> **Գրիգոր Ակնեցցի, Պատմութիւն թաթարաց, էջ 65**: Ըստ Բար Հեբրեոսի՝ Հեթումը գահը թողնելուց առաջ (1268 թ.) ինքն էլ Բաղդադում տեսակցել է Աբաղա խանին՝ նրան որդու ազատության համար իր երախտագիտությունը հայտնելու, ինչպես նաև իր իշխանությունը վերջինիս փոխանցելու թույլտվություն ստանալու: «Արհայից արհան» համաձայնել է՝ պահանջելով, որ Լևոնն անձամբ իրեն այցի գա իշխանությունը ժառանգելու խնդրով: Տե՛ս **Bar Hebraeus, Chronography**, p. 448: Ըստ սառոի մատենագրի՝ 1269 թ. հուլիսին Աբաղային այցելել է արդեն Լևոնը և վավերացրել իր իշխանությունը: Տե՛ս նույն տեղում:

<sup>32</sup> **Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 251-251**: Լևոնը պաշտոնապես թագադրվեց միայն 1271 թ. հունվարի 6-ին:

<sup>33</sup> Սարգիս արհայսկոպոսի այս դեսպանագնացության և նրա օրեցօր անող հեղինակության պատճառով Ռումի սուլթանության վեզիր Մուին ալ-Դին Փերվանեի դավադրության զոհը

դադր գրում է. «Մուհարրամ ամսի սկզբներին (1275 թ. հուլիս) նրանք հասան Աբաղայի մոտ, ով [այդժամ] գտնվում էր Արմուում (*Armū*)<sup>34</sup> Ատուրպատականի (*Adārbaygān*) երկրում, և գտնվում էր այն տանը, որ Հուլաղուն էր կառուցել՝ կողմին իր կին Տողուզ Խաթունի համար մի հսկայական եկեղեցի, որի պատերը ներսից ոսկեգոծ էին, դրվագված տարատեսակ թանկարժեք ֆաբերով: Երբ նրա առջև հայտնվեցին, վախեցան իրենց բերած նվերների համար: Առաջինը, ով իր ընծաները մատուցեց, Մարհասյանն էր: Դրանց մեջ կային հրաշագեղ օղագրահներ, որ զարմացրին նրան (իմա՝ Աբաղային), և նա բաժանեց դրանք իր [արժունական] երևելիներին»<sup>35</sup>:

Մոնղոլական իշխանությունները բարձր էին գնահատում հայոց արքաների հավատարմությունը և պատրաստ էին արտոնություններ ու լիազորություններ շնորհել նրանց: Հեթում Պատմիչ Կոռիկոսցու վկայությամբ՝ Աբաղա իլխանը 1277 թ., երբ սուլթան Բայբարսի «իկոնիական» արշավանքից հետո փորձում էր կարգուկանոն հաստատել Ռումում՝ պատժելով եգիպտոսի սուլթանի հետ գաղտնի բանակցությունների մեջ մտած կենտրոնախույս ուժերին՝ վեզիր Փերվանեի գլխավորությամբ, առաջարկում է հայոց արքա Լևոնին ստանձնել Ռումի թագավորության (*roiaume de Turquie*) կառավարումը: Հայոց արքան, սակայն, հաշվի առնելով Մամուլքյան սուլթանությունից եկող մշտական վտանգը և թե ինչ գլխացավանք կարող էր դառնալ դա Հայոց թագավորության համար, հրաժարվել է Աբաղայի նվերն ընդունելուց՝ իլխանին հորդորելով այդուհետ

դառնալու մասին մասնրամասն տե՛ս Գ. Դանիկեան, «Երգնկայի Սարգիս արխեպիսկոպոսի գործունեությունն ըստ ժԳ.-ժԳ. դարերի մամուլեան սկզբնաղբիւրների», *Հայկագեան հայագիտական հանդես*, հ. 38, Պէյրուք, 2018, էջ 196-201:

<sup>34</sup> *Armū* ասվածի տակ Բայբարսի կենսագիրն ամենայն հավանականությամբ նկատի ունի Ուրմիան: Եթե այդպես է, ապա Իլխանության պատմիչ Ռաշիդ ալ-Դինի երկում այդ տունամրոցի մասին գտնում ենք հետևյալ տեղեկությունը. «Բաղդադից բերված գանձերն ու հսկայական հարստությունները Հուլաղու խանը Ռեյի տիրոջ Ալա ալ-Դինի որդի Նապիր ալ-Դինի հետ ուղարկեց Ատուրպատական, ինչպես նաև հերետիկոսների բերդերից, Ռումից, Վրաստանից, Հայաստանից, լուրերից և ֆողերից վերցրած գանձերը: [Հուլաղուն] թավրիզի մեյիֆ Մաշդ ալ-Դինին կարգադրեց Ուրմիայի և Սալմասի (Սալմաստ) լճի ափին՝ լեռան վրա, մի հիաստանչ և խիստ ամուր բերդ կառուցել: Հավելով բոլոր թանկարժեք մետաղադրամները և դրանցից *բալիշ* (բնագրում՝ *bālīš*, որ մոնղոլական դրամական միավոր էր) հատելով այստեղ գետեղեցին»: *Sk' u Rašid al-Dīn, Ğāmi' al-Tawārīh*, ց. 1, ց. 716-717 և հմմտ. *Рашид-ад-Дин, Сборник летописей*, том III, с. 47:

<sup>35</sup> *Izz al-Dīn Ibn Šaddād, Tārīh al-Malik al-Zāhir*, bi-tahqīq Aḥmad Ḥuṭayṭ (Die Geschichte des Sultans Baibars von 'Izz ad-dīn Muḥammad b. 'Alī b. Ibrāhīm b. Šaddād (st. 684/1285), Wiesbaden, 1983), ց. 122 **al-Yūnīnī**, *Dayl Mirāt al-zamān, al-tab'a al-ulā*, ց. 3, Ḥaydarābād, 1960, ց. 112.

Ռումի գործերի տնօրինումը չվստահել մուսուլման կառավարիչներին<sup>36</sup>: «*La Flor des Estoires*» երկի քարոզչական նպատակներն անառարկելի փաստ են արդի հետազոտողների համար, այնուամենայնիվ, հաղորդման պատմական հիմքերը լիովին բացառելն էլ սխալ կլինի<sup>37</sup>:

Արտաքին թշնամիների և հավանաբար հենց նույն Փերվաների՝ հայոց թագավոր Լևոնի դեմ հյուսած տարատեսակ դավերն ու մոնղոլական իշխանությունների աչքում վերջինիս ունեցած բարի համբավն ու հեղինակութունն արատավորելու փորձերն է ակնարկում Ստեփանոս Վահկացին, երբ գրում է, թե «... ընթացան առ թագաւոր ազգիւնն նետողաց, ի բարէպաշտ խանն Ապաղա, որդի մեծի խանին Հուպայունի, եւ բազում նենգաբանութեամբ մատնեալ զարեայն ամենայն Հայոց՝ շարաշար սուտ եւ բասիր բանիւ»<sup>38</sup>: Հայոց արքան, սակայն, ամեն անգամ խորագետ իմաստութեամբ և իշխանին մատուցած փառահեղ նվերներով կարողացել է հերքել թշնամական բանսարկությունները և շահել մոնղոլ ինքնակալի բարյացակամությունը. «Վասն որոյ եւ ամենասուրբ արեայն Հայոց թէպէտ եւ բազում անգամ ընթացեալ եւս էր առ մեծ խանն վասն քրիստոնէից, եւս առաւել սակս այս պատճառի, զանազան եւ անբաւ բազմութեամբ ընծայից ամենայն արեւելայնոցն իշխանաց արեայազանց, նա եւս առաւել խանին եւ ամենայն բազմութեան զարաց իւրոց մատուցեալ, մինչեւ զվաղընչոց բանսարկութեալ նենգաբանութիւնսն ի թշնամեաց իւրոց կարողութեամբ անեղին Աստուծոյ սուտ արարեալ, եւ զիւրն ամենայնշմարիտ հաւատս եւ զգործս անարատ ընդդէմ Աստուծոյ եւ խանին յայտնի կացուցեալ, որ եւ բազում զովութիւնս ընկալեալ ի նմանն, եւ պարզեաւ թագաւորականնաւ դարձուցեալ յաշխարհ իւր, եւ զամենայն թշնամիսն իւր եղեալ ի ներոյ ոտից նորա՝ առնել ընդ նոսա զոր ինչ եւ կամեսցի, եւ այս այսպէս պատահեցաւ ըստ ժամանակին բերմանց եւ տարբերութեան»<sup>39</sup>:

**1285 թ.** Լևոն Բ-ը վերստին այցելել է ուրդու՝ այս անգամ Իշխանության գահին նստած նոր միապետին՝ Արղուն խանին իր հավատարմությունը հայտնելու. «Ի թվին ԶԼԳ (1285 թ.) թագաւորն Հայոց Լևոն գայ յարեւելս առ Արղան

<sup>36</sup> Hayton, “La Flor des estoires de la Terre d’Orient”, éd. Ch. Köhler, *Recueil des historiens des croisades. Documents arméniens*, t. 2, Paris, 1906, p. 180-181.

<sup>37</sup> Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, Բ. Բ, էջ 323-325 Cl. Mutafian, *L’Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, Paris, 2012, p. 163: Հերթով Պատմիչ արձանագրած հաղորդման արձագանքը կա նաև ֆլորենցիացի պատմիչ Ջովաննի Վիլլանիի (մահ. 1348 թ.) *Nuova Cronica* («Նոր ժամանակագրություն») երկում: Տե՛ս Giovanni Villani, *Nuova Cronica*, A cura di G. Porta, vol. 1 (Libri I-VIII), Parma, 1990, p. 476-477: Հմմտ. Cl. Mutafian, “Visites arméniennes”, p. 485:

<sup>38</sup> *ՀԶԷ, ԺԳ դար*, էջ 573:

<sup>39</sup> Նույն տեղում:



խանն և բազում մեծարանաւ սիրեաց զնա», – գրում է Անանուն Սեբաստացի ժամանակագիրը՝ հավելելով. «էր և անդ սուլտանն Հոռոմոց<sup>40</sup>: Եւ դարձաւ թագաւորն Հայոց Լևոն յաթոռ իւր և յորժամ եմուտ յերկիր իւր վախճանեալ էր Կեռանէ թագունի իւր»<sup>41</sup>:

Դահամունքով իլխանների հետ հարցեր կարգավորելու վերաբերյալ մեկ այլ հաղորդում էլ գտնում ենք Tārīh āl-i Salḡūq («Սելջուկյան զարմի պատմություն») անանուն պարսկալեզու մի ժամանակագրության մեջ (գրված ենթադրաբար ԺԴ դարի սկզբներին): Ըստ այդ վկայության՝ հիշրայի 686 թ. վերջին (1287 թ. վերջ – 1288 թ. սկիզբ) Կիրիկյան Հայաստանը (deyār Ṭarsūs՝ «Տարսոնի երկիրը») ենթարկվել է թուրքմեն Կարամանների (pesar qarāmān) ասպատակություններին: Այս իրավիճակում հայոց թագավորը (նկատի է առնված Լևոն Բ-ը, բնագրում՝ Takfūr) իր «տեղակալին» (nāyeb ḥod) մեծ գումարով (bā māl farāwān) ուղարկում է իլխանի մոտ՝ այս մասին զեկուցելու և հավանաբար նաև զինական օգնություն խնդրելու նպատակով: Ինչպես 1285 թ. այցելության դեպքում, այս անգամ ևս պարզվում է, որ այդժամ ուրդում էին գտնվում նաև Իկոնիայի սուլթան Մասուդ Բ-ը և վերջինիս վեզիր Սահիբ Ֆախր ալ-Դինը՝ նույնպես թուրքմենական իշխանությունների (բեյլիքների) դեմ պայքարում օժանդակություն ստանալու խնդրով: Վերջիններիս հրահանգվում է Արդունի եղբայր Գայխաթուի (ապագա իլխանի) գլխավորությամբ, որն այդ ժամանակ Ռումի իլխանական կառավարիչն էր, պատժել թուրքմեններին: Ճիշտ է՝ կարճ ժամանակ անց մոնղոլ-սելջուկյան զորքերը գրավում և ավերածության են ենթարկում Լարանդան, իսկ Կարամանների առաջնորդ Գյուների-բեկը ձևականորեն ընդունում է իր հպատակությունը Մասուդ Բ-ին և մոնղոլներին, բայց Կարամաններից և մյուս թուրքմենական իշխանություններից եկող վտանգը չեզոքացնել այդպես էլ չի հաջողվում<sup>42</sup>:

<sup>40</sup> Ռումի սուլթան Գիյաս ալ-Դին Մասուդ Բ-ն է (կառ. 1282-1283, 1284-1293, 1294-1300, 1302-1304 թթ.): Գահի համար երկարամյա պայքար է մղել Քայխուբադ Գ-ի հետ, որը նույնպես ֆանիցս հայտնվել է իշխանության ղեկին (1284, 1293-1294, 1300-1302, 1304-1307 թթ.):

<sup>41</sup> Տե՛ս Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ. (հետայսու՝ ՄԺ), հ. Բ, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 148, ինչպես նաև ՀԶԶ, ԺԳ դար, էջ 571-572: Հմմտ. նաև ՄԺ, հ. Բ, էջ 169, ծնթգր. 171:

<sup>42</sup> Tārīh āl Salḡūq dar Ānāṭūlī, taṣḥīḥ we-ta'liqāt Nādereh Ḡalālī, Tehran, 1999, թ. 113: Թուրքմենների դեմ Գայխաթուի գործողությունների մասին ակնարկում է նաև Բար Հերբեոսի շարունակողը, բայց հայոց թագավորության վրա նրանց հարձակումների մասին լռում է: Տե՛ս **Bar Hebraeus**, *Chronography*, p. 492: Այս մասին տե՛ս նաև **Cl. Cahen**, *La Turquie pré-ottomane* (Varia Turcica VII), Istanbul, 1988, p. 293 **F. Sümer**, “Karāmān-Oghulları”, *EP*, vol. 4 (IRAN-KHA), Leiden, 1997, p. 621: Հատկանշական է, որ Կարամանների հրոսումները Կիրիկյան Հայաստանի տարածք բավական հաճախադեպ էին դարձել 1270-80-ական թվականներին: Ընդունելով Եփրատի և Ասորիի Մամլուկյան սուլթանների գերագահությունը՝ նրանք իրենց գործողությունները մեծամասամբ համապատասխանեցնում էին հայոց թա-

Մոնղոլ պետական այրերի հանդեպ հայկական իշխանությունների ունեցած նվիրաբերման պարտականության մասին վկայող մի հետաքրքիր դրվագ է ներկայացնում Բար Հեբրեոսի շարունակողը: **1295 թ.**, երբ հայոց արքա Հեթում Բ-ը շտապում էր իր հավատարմությունը հավաստելու և ընծաները մատուցելու պետական հեղաշրջման արդյունքում Իլխանության գահին նստած Բայդու խանին (1295 թ. մարտ – 1295 թ. հոկտեմբեր), վերջինս թե՛ պայքարի մեջ էր Արղուն խանի որդի Ղազանի և էմիր Նովրուզի հետ, որոնք իրենք հավանություն ունեին իշխանության նկատմամբ՝ հօգուտ հիշյալ Ղազանի: Այսպիսի պայմաններում, ինչպես Բար Հեբրեոսի շարունակողն է վկայում, Բայդուն իրեն այցելելու եկած Հեթումի մոտ դեսպան է ուղարկում և խորհուրդ տալիս առժամանակ հանգրվանել Մարաղայում, մինչև որ ինքը կպարզի իր հարցերը խոսվարանների հետ: Հեթումը մոտ տասն օր սպասում է՝ հանդիպման ակնկալիքով: Այդ ընթացքում Նովրուզը, շահելով մի շարք հզոր ու ազդեցիկ էմիրների վստահությունը, ի վերջո Իլխանության գահին է բազմեցնում Ղազանին: Իսկ Բայդուն, իրեն պարտված համարելով, փախուստի է դիմում, չնայած շուտով բռնվում և դատապարտվում է մահվան<sup>43</sup>: Այս դրույթյան մեջ Հեթում արքան վճռում է Բայդուի փոխարեն հանդիպել նորահռչակ Ղազանին և իր հավատարմությունը հավաստել վերջինիս: «Եվ Հեթումն անհապաղ պատրաստվեց և գնաց նրան իր ծառայությունը հայտնելու՝ մեծամեծ նվերներ հանձնելով նրան: «Արֆայից արֆան» (իմա՝ Ղազանը) ասաց նրան. «Դու եկել էիր Բայդուին այցելելու, և ոչ մեզ»: Եվ Հեթում արֆան պատասխանեց. «Ես պատավորված եմ հնազանդություն ցուցաբերելու Ջինգիզ Խանի ողջ զարմին,

գավորության դեմ մամլոյան զորաբանակների շարժերին՝ ասպատակ սփռելով հայկական բնակավայրերում: Հայկական աղբյուրներից էլ հայանի է, որ, օրինակ, 1283-1284 թթ. հայ-թուրքմենական թե՛ մարտեր են ծավալվել Մանիոն բերդի համար: Ընդ որում, մի անունն ժամանակագրի՝ ՉԼԴ (1285 թ.) թվականի ներքո արձանագրած վկայությունից հաստատվում է նաև *Tārīḫ āl-i Salḡūq* երկի հեղինակի վերոբերյալ հաղորդումը. «Ժառանգան գերեաց գերկիրս Տարսուն ի Կիլիկիայ»: Տե՛ս **Գարեգին Ա. Կաթողիկոս [Յովսեփեան], Յիշատակարանք ձեռագրաց, Հատոր Ա (6 դարից մինչև 1250 թ.)**, տպարան Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1951, էջ 528, *ինչպես նաև Սամուել Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրություն, շխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի*, «Նաիրի», Երևան, 2014, էջ 261: Կարելի է ենթադրել, որ Տարսունի մերձակայքի մի շարք շրջաններ Կարամանները հայոց թագավորությունից խլել էին դեռ հիշյալ 1285 թ., և միայն 1288 թ. մոնղոլական զորքերի միջամտությամբ է հնարավոր եղել դրանց ազատագրումն ու վերամիակցումը հայոց թագավորությանը: Հայ-թուրքմենական հարաբերությունների մանրամասն ֆնանսկումն առանձին հետազոտության թեմա է: 1270-1280-ական թթ. որոշ դրվագների մասին տե՛ս նաև *Կիլիկյան Հայաստանի պատմության մամլույթյան սկզբնաղբյուրները (I): Իբն Աբդ ալ-Ջահիր (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 20, Արաբական աղբյուրներ Դ)*, թարգ. բնագրերից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Գագիկ Դանիելյանի**, Երևան, 2021, էջ 252, 257, 263:

<sup>43</sup> **Կ. Մաթևոսյան, Հեթում Պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը**, Երևան, 2011, էջ 57 (դրված է 1294 թ. տակ): Հմմտ. **ՀԶԶ, ԺԳ դար**, էջ 772-773:

ուստի ես եկել եմ հավատարմություն հայտնելու նրան, ով գահին է նստել»: Այդուհետ «արհայից արհան» նրան ջերմորեն ողջունեց և արհայական հանդերձ հագցրեց: Նա հրամայեց, որ նրա համար արտոնագիր գրվի, և որ նրա բոլոր խնդրանքները կատարվեն»<sup>44</sup>:

Ընծաներն ու կաշառքը գործուն միջոց էին ոչ միայն մոնղոլական բարձրագույն իշխանությունների՝ իլխանների և անմիջապես արքունիքի հետ հարաբերություններում, այլև զանազան մոնղոլ կառավարիչների և ազդեցիկ ռազմաքաղաքական այրերի հետ «ընդհանուր լեզու» գտնելիս: Այս մասին մի հաղորդում ենք գտնում «Մար Յահբալլահ Գ-ի և Ռաբբան Սաումայի պատմություն» վերնագրով երկում: Պատմելով ասորի նեստորական եկեղեցու պատրիարք Յահբալլահ Գ-ի (1281-1317 թթ.) էմիր Նովրուզի ձեռքից նրա և Մարաղայի նեստորական բնակչության կրած տանջանքների և հալածանքների մասին, Ռաբբան Սաումայի կենսագիրը գրում է, որ Նովրուզի հետապնդումներից խուսափելու նպատակով պատրիարքն ապավինում է այդ ժամանակ Մարաղայում հանգրվանած և, ինչպես վերևում ենք նշել, մոնղոլական արքունիքում իր ընդունելությունը սպասող հայոց արքա Հեթում Բ-ի օգնությանը. «Ռաբբան Սաումայի կառուցած եկեղեցուն հասավ Հայոց արհան՝ Խիթամ (իմա՝ Հեթում) Թաֆֆուրը, և իր նվերների բազմությամբ և զորով փրկեց այն ավերումից: Կաթողիկոսը, իրեն բռնածնեի ձեռքից մազապուրծ, փախչում է և գիշերը թափվում նրա մոտ»: Պատմիչը գրում է, որ հաջորդ օրն էմիր Նովրուզի մարդիկ Հեթումին են ներկայացնում կաթողիկոսին ձեռքակալելու հրամանը՝ պահանջելով հետախուզվողին իրեն հանձնել: Իմանալով այս մասին՝ կաթողիկոսը դարձյալ փախչում է: Իսկ Հեթումը փորձում է կրկին նվերներ մատուցելով հանդարտեցնել էմիր Նովրուզին: Մի քանի օր անց Հեթումը Մարաղայից մեկնում է Թավրիզ՝ իրեն ուղեկցող ենթակաների շարքում իշխանության եկած Ղազանի արքունիք տանելով նաև հայկական զգեստներով ծպտված Մար Յահբալլահին<sup>45</sup>:

Իլխաններից «իշխանության տվչության» ակնկալիք ունեցող և նրանց քաղաքական կամքի բարեհաճությունը շահելու ցանկությամբ տոգորված հայոց գահակալների այցելություններն ուրգու միշտ ուղեկցվում էին շքեղ նվերներով: 1297 թ. տեղի ունեցած մի դեպք պարզորոշ է արտահայտում այդ երևույթը: 1296 թ. հայոց արքա Հեթում Բ-ը, որն իրեն ավելի շատ ֆրանցիսկյան միաբան էր համարում, քան թե արքա, ևս մի անգամ վտանգի տակ է դնում թագավո-

<sup>44</sup> Bar Hebraeus, *Chronography*, p. 506.

<sup>45</sup> *The Monks of Kublai Khan, Emperor of China or The History of the Life and Travels of Rabban Sawma, Envoy and Plenipotentiary of the Mongol Khans to the Kings of Europe, and Markos Who as Mar Yahballaha III became Patriarch of the Nestorian Church in Asia*, tr. from the Syriac by E. A. Wallis Budge, London, 1928, pp. 103-105.

րական իշխանությունը և «Թագապահ» կարգելով իր եղբորը՝ Սմբատին, մյուս եղբոր՝ Թորոսի հետ մեկնում է Կոստանդնուպոլիս՝ իր քրոջը՝ Ռիտային (Մարիա-Քսենիա) տեսակցելու<sup>46</sup>: Օգտվելով Հեթումի և Թորոսի բացակայությունից՝ Սմբատը բռնազավթում է իշխանությունը և Գրիգոր է Անավարզեցի (1293-1307 թթ.) կաթողիկոսի ձեռքով օծվում հայոց թագավոր (կառ. 1296-1298 թթ.): Այնուհետ Սմբատը ճանապարհվում է Ղազանի մոտ՝ իր իշխանությունը լեգիտիմացնելու: Իմանալով տեղի ունեցած դավադրության և հեղաշրջման մասին՝ Հեթումը և Թորոսը նույնպես շտապում են Ղազանի մոտ<sup>47</sup> կրկին նվերներով, որ խնդրում են կայսրից: Գահի համար ծավալված «մրցավազքը» Սամուել Անեցու շարունակողներից մեկն այսպես է նկարագրում. «Եվ նոքա դարձան անդէն առ կայսրն, եւ առեալ ոսկի բազում գնացին առ դանն Ղազան յԱրեւելս: Իսկ Սմբատն յառաջագոյն էր գնացեալ ի Թաթարն բազում գանձիւք, եւ առեալ էր ի դանն իւր կինն, որ էր ի դանի ազգէն, դարձեալ գայր յաշխարհն իւր»<sup>48</sup>: Մոնղոլ կին տալու վերաբերյալ այս վկայությունն իրենցից կախյալ կառավարողների իշխանությունը ճանաչելու մոնղոլների վերը նկարագրված սովորության ևս մի վառ օրինակ է<sup>49</sup>: Սմբատը, սակայն, ձախողում է իլխանական արքունիք հասնելու Հեթումի ծրագիրը՝ կուրացնելով և բանտարկելով վերջինիս, իսկ մյուս եղբորը՝ Թորոսին, սպանում է: Այս «դավադրաշատ» ու եղբայրասպան գործողություններին շուտով միջամտում է չորրորդ եղբայրը՝ Կոստանդինը, որը բանտից ազատում է Հեթումին՝ վերջինից ստանալով երկիրը «պարոնություն» սկզբունքով կառավարելու իրավունք<sup>50</sup>: Բայց շուտով նա նույնպես պետական իշխանությունը բռնազավթելու բացահայտ նկրտումներ է ցուցաբերում, ինչի պատճառով Հեթումը ձերբակալում է նրան և Սմբատի հետ միասին աքսորում Կոստանդնուպոլիս: Ուշագրավ է, որ այս ամենից հետո Հեթումը հարկադրված է եղել ևս մի անգամ մեկնել Աբաղայի մոտ (1298 թ.) իր իշխանության օրինականությունը վերահաստատելու<sup>51</sup>:

Մոնղոլներն արդեն Ղազան խանի օրոք պաշտոնապես դառնում են իսլամի հետևորդներ և այս հանգամանքը մեծապես փոխում է հայ-մոնղոլական հարա-

46 Անդրոնիկոս Բ Պալեոլոգոսի (կառ. 1282-1328 թթ.) որդի և գահակից կայսր Միխայել Թ Պալեոլոգոսը (կառ. 1294-1320 թթ.) ամուսնացած էր Հեթումի քույր Ռիտայի հետ, ով ամուսնությունից հետո ընդունել էր Մարիա անունը: Ամուսնու մահից հետո Ռիտա-Մարիան վաճվեց է մտել և ընդունել Քսենիա անունը:

47 *Les gestes des Chiprois*, p. 282-284 *Deeds of the Cypriots*, pp. 137-138.

48 Սամուել Անեցի և Շարունակողներ, *Փամանակագրություն*, էջ 268:

49 Ըստ «Վարժ կիպրացոց» երկի ամանուն հեղինակի՝ Սմբատը մոնղոլների է առել կնության, որպեսզի «թաթարների» հետ ավելի ամուր մտերմություն ունենա: Տե՛ս *Les gestes des Chiprois*, p. 283 *Deeds of the Cypriots*, p. 138:

50 *ՄՃ*, հ. Բ, էջ 150:

51 Սամուել Անեցի և Շարունակողներ, *Փամանակագրություն*, էջ 269:

բերությունների բնույթն ու բովանդակությունը: Այս շրջագարձի գույժն է դառնում 1307 թ. մոնղոլ զորապետ Բիլարղուի ձեռքով հայոց մանկահասակ արքա Լևոն Գ-ի (կառ. 1306-1307 թթ.) և նրա խնամակալ, «ավագ պարոն» կամ «թագավորահայր» Հեթումի դաժան սպանությունը: Բիլարղուի արարքը, ըստ էության, ինքնագործունեության հետևանք էր և չէր արտահայտում իլխանական ուրդուի պաշտոնական վերաբերմունքը: Սրա ապացույցն այն է, որ մոնղոլ զորապետի գործած արարքն Օլջայթու խոզաբանդա խանը չի ներել՝ մահապատժի ենթարկելով նրան և մեղսակիցներին: Հովհաննես Դարգելը գրում է, որ Հեթումի եղբայր Ալինախը «մեծ պարգևներով ու նվերներով» գնացել է իլխանական արքունիք՝ բողոքելու Բիլարղուի դեմ<sup>52</sup>: Մմբատ Սպարապետի «Տարեգրքի» համառոտ տարբերակի շարունակողի վկայությամբ՝ իր մոտ գանգատով ներկայացած Ալինախին՝ Հեթումի եղբորը, իլխանը «գրամական փոխհատուցում» («զվնար անմեղացն») է տվել<sup>53</sup>: Չնայած այս հանգամանքին, այնուամենայնիվ, պարզ էր, որ ոչինչ այլևս նախկինի պես չէր: Օլջայթուի և նրան գահի վրա հաջորդած Աբու Սաիդի կառավարման տարիներին խիստ թուլանում է կապն Իլխանության արքունիքի հետ և մոնղոլների հետ գործակցային հարաբերությունները ձեռք են բերում խորհրդանշական բնույթ: Աղբյուրներում նվազում են մոնղոլների հետ հարաբերությունների՝ այդ թվում դիվանագիտական նվիրաբերման վերաբերյալ տեղեկությունները: Այնուամենայնիվ, որոշ փաստեր ունենք՝ պնդելու, որ հայոց արքունիքը նախկինի պես կատարել է մոնղոլական ռազմական ձեռնարկումներին մասնակցելու և իլխանական բանակի պարենով ապահովելու իր ստանձնած պարտավորությունը:

Մամլուքյան պատմագրությունից, օրինակ, կարող ենք մատնանշել մի դրվագ, որը թվագրելի է հիշրայի 712-713 թվականներով (1312-1313 թթ.), երբ մոնղոլական զորքերը նախապատրաստել և իրականացրել են մերձեփրատյան ալ-Ռահբա բերդի անհաջող պաշարումը: Օլջայթուի այս արշավանքը, ըստ էության, Ասորիքը գրավելու մոնղոլների վերջին փորձն էր: Չնայած Կիլիկիայի պատմության հետազոտողների պնդմանը, թե հայկական ուժերն այս անգամ արդեն առհասարակ որևէ մասնակցություն չեն ունեցել այս ռազմական ձեռնարկմանը, մամլուքյան պատմիչ Իբն ալ-Դավադարին մեջբերում է իր մի տեղեկատուի վկայությունները, որոնք լրիվ հակառակն են ապացուցում: Այդ

<sup>52</sup> Sté u “Chronique d’Arménie par Jean Dardel”, éd. Ch. Köhler, *Recueil des historiens des croisades. Documents arméniens*, t. 2, Paris, 1906, p. 17 և **Յովհաննես Դարգելի ժամանակագրություն** Հայոց, սպարսմ Ի.Ն. Սկոբոխոզովի, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 25:

<sup>53</sup> **Մմբատայ Սպարապետի Տարեգրք**, ի լոյս ընծանեաց հանդերձ ժանօրոսեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 127:

հաղորդումների և դրանց հավաստիության մանրամասն քննարկումն այլ հետազոտության թողնելով՝ նշենք միայն սույն թեմայի համար հետաքրքրություն ներկայացնող հատվածները: Մասնավորապես արձանագրված է, որ իլխանի աջակցության կոչին արձագանքած «Սսի տերը» (անվանված է «պիղծ և ստոր», բնագրում՝ *ṣāhib Sīs al-naḡis al-ḥasīs*) հսկայական նյութական օգնություն (փայտ, պարեն, ջորիներ, մեխեր և պարաններ) էր ուղարկել Կալ-Ռահման պաշարած մոնղոլական զորքին: Այլուր նշվում է, որ «Սսի տերն Կալ-Մալիֆ հողաբանդային մատուցելու մեծաքանակ նվերներ (*al-taqādim*) էր ուղարկել՝ գումար՝ ջորիների և ձիերի (*al-akādīs*) վրա, 100 հզ. երկաթյա պայտ՝ իրենց մեխերով, մեծ քանակությամբ այծեր և կովեր, ամեն տեսակի որսորդական թռչունների վանդակներ (*ḥūšḥānah*, պետք է լինի՝ *qūšḥānah*), ցորենով և գարիով բեռնավորված 30 հզ. ավանակներ»<sup>54</sup>:

Միջնադարյան մտածողության համաձայն դիվանագիտական ընծաներ կարող էին դիտվել նաև մարդիկ՝ որպես ստրուկներ, թշնամական գերությունից ազատված իշխանավորներ, քաղաքական հետապնդման և հետախուզման մեջ գտնվող անձինք, ընդհանուր թշնամիները՝ ողջ կամ հանգուցյալ, և անգամ մարդու մարմնի մասերը: Դրանց փոխանցումը կարող էր էլ ավելի փառահեղ նվեր և ծառայություն դիտարկվել, քան որևէ թանկագին ընծա կամ նվեր: Օրինակ, այս տրամաբանությունամբ, 1296 թ. Կիլիկիայում ձերբակալվել և իլխանական իշխանություններին է փոխանցվել Ռումի խոռվարար էմիր Բալտուն: Հեթոմի բացակայության պայմաններում հայոց գահը բռնազավթած Սմբատը սա հավանաբար հարմար հանգամանք է համարել Ղազանի բարեհաճությունը շահելու և նրանից «իշխանության տվչություն» հայցելու համար, ինչի մասին վերևում արդեն գրել ենք. «Եւ ըմբոնեա[ց] զՊալթօն և զորդի նորա զՔարաթն և առաքեաց առ Խազանն, – գրում է Անանուն Սեբաստացի տարեգիրը՝ շարունակելով, – ու և յետոյ ինքն զնաց առ Խազանն»<sup>55</sup>: Ապստամբները տարվում են Թավրիզ և դատապարտվում մահվան<sup>56</sup>:

<sup>54</sup> **Ibn al-Dawādārī**, *Kanz al-durar wa-ḡāmi‘ al-ḡurar*, թ. 9 (Al-Durr al-fāḥir fi sīrat al-Malik al-Nāṣir), al-Qāhira-Bayrūt, 1960, թ. 253-255: Այս մասին տե՛ս նաև Գ. Դանիելյան, «Մալաթիայի գրատունը մավրոմների կողմից 1315 թ. և Կիլիկեան Հայաստանը», ՀՆ, 2017, էջ 91-92, ծան. 8:

<sup>55</sup> ՄԺ, հ. Բ, էջ 150: ՄԺ, հ. Ա, էջ 87 (*սխալագրությամբ «պաշտօն» է «Պալթօ»-ի փոխարեն*), ինչպես նաև Հեթում Պատմիչ Կոռիկոսցի, *Ժամանակագրություն*, էջ 57:

<sup>56</sup> Նույն տեղում: Բալտուի ապստամբության և դրա ենթման մասին գրում է նաև Ռաշիդ Կալ-Դինը, թեև նրա ձերբակալության գործում հայոց թագավորի ունեցած դերի մասին լուր է: Տե՛ս **Rašīd al-Dīn**, *Ġāmi‘ al-Tawārīḥ*, թ. 1, թ. 925, 929 և Рашид-ад-Дин. Сборник летописей, том III, с. 171, 175 (ըստ պատմիչի՝ Բալտուն բռնվել է Սուլամիշ (Բաշու նոյինի թոռ) և Արաբ զորապետերի ձեռով, որոնցից առաջինին շտառով Ղազանը վստահել է Ռումի կառավարումը):

Հարևան մի դեպք էլ տեղի է ունենում 2-3 տարի անց: 1298-1299 թթ. մոնղոլների իշխանության դեմ ապստամբություն է բարձրացնում Բալտուի սպանությունից հետո Ռուսի կառավարիչ նշանակված Սուլամիշը: Վերջինս, գործակցելով թուրքմեն կարամանների հետ, գաղտնի բանակցություններ է սկսում Մամուլքյան իշխանությունների հետ: Խոռովությունը խեղդելու նպատակով Ղազանը Կոտլուհ-շահի հրամանատարությունը գորք է ուղարկում Իկոնիա: Վճռական ճակատամարտում Սուլամիշը պարտվում է և փախչում Կահիրե, որտեղ լավ ընդունելության է արժանանում: Բայց շուտով ստիպված է լինում կրկին վերադառնալ Ռուս՝ իր ընտանիքը գտնելու համար: Սմբատին գահից հեռացրած Հեթումը սա պատեհ հնարավորություն է համարում իշխանական իշխանությունների աչքում իր վարկը վերստին բարձրացնելու համար: Նույն Անանուն Սեբաստացու վկայությամբ (1299 թ.) Հեթումը բռնում է ապստամբ գործակցություն և փոխանցում Ղազանին, որի հրամանով էլ նա սպանվում է<sup>57</sup>:

<sup>57</sup> Մժ, հ. Բ, էջ 151: Մժ, հ. Ա, էջ 87, ինչպես նաև Հեթում Պատմիչ Կոնիկոսցի, *Ժամանակագրություն*, էջ 57 (սույն ժամանակագրության՝ Հեթում Բ-ին վերագրվող խմբագրության մեջ հաղորդվում էր վաղ և Բալտուի խոռովության մասին վկայությունից անմիջապես հետո՝ Չևե (1296) թ. ներքև. ակնհայտ է, որ այստեղ երկու տարբեր դեպքերի շփոթ կա): Այս անցքերի մասին մանրամասն պատմում են նաև Ռաշիդ ալ-Դինն ու Ակսարայիին, թեև Սուլամիշի ձերբակալման գործում հայոց արքայի ունեցած դերի մասին չեն հիշատակում: Տե՛ս **Rašīd al-Dīn, Ğāmi‘ al-Tawārīh**, ց. 1, ց. 935-938 և **Рашид-ад-Дин, Сборник летописей**, том III, с. 180-182, ինչպես նաև **Kerīmüddin Mahmud Aksarayī, Müsämeret ül-ahbār: mogollar zamanında türkiye selçukluları tarihi**, Mukaddime ve haşiyelerle tashih ve neşreden O. Turan, Ankara, 1944, ց. 239-242, 245-247, 270-271: Այս դեպքերն իրենց լայն արձագանքն են գտել նաև մամուլային պատմագրության մեջ, ընդ որում արաբագիր պատմիչները գրեթե միաձայն են Սուլամիշի դեմ պայքարի, նրա հայտնաբերման և ձերբակալման հարցում Հեթումի գործուն մասնակցության մասին: Ձերձ կմնանք այդ վկայությունների հանգամանակից ֆննդությունից, բայց կհիշենք առավել կարևորները. տե՛ս **Baybars al-Manşūrī, Zubdat al-fikra fi tārīh al-hiğra**, bi-tahqīq Dunāld Rītšārdz (D.S. Richards), Berlin-Bayrūt, 1998, ց. 319 **al-Yūnīnī, Dayl Mirāt al-zamān (tārīh al-sanawāt 696-711 h. / 1297- 1312 m.)**, bi-tahqīq Ḥamza ‘Abbās, ց. 1, Abū Zabī, 2007, ց. 193-196 **Tārīh Abī al-Fidā’ al-musammā al-Muḥtaşar fi aḥbār al-başar**, ց. 2, bi-tahqīq Maḥmūd Dayyūb, Bayrūt, 1997, ց. 375 **Al-Nuwayrī, Nihāyat alarab fi funūn al-adab**, ց. 31, Bayrūt, 2004, ց. 236-237 **al-Ġazarī, Tārīh Ḥawādīṭ al-zamān wa-ambā’ uhu wa-wafayāt al-akābir wa-l-ā’yān min abna’ihī al-ma’rūf bi-tārīh Ibn al-Ġazarī**, ց. 1, bi-tahqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, Şaydā-Bayrūt, 1999, ց. 435-437 **Ibn al-Dawādārī, Kanz al-durar**, ց. 9, ց. 9-11 **Al-Maqrīzī, Kitāb al-sulūk li-ma’rifat duwal al-mulūk**, ց. 1.3, bi-tahqīq Muḥammad Muşţafā Ziyāda, al-Qāhira, 1934, ց. 874-878 **al-‘Aynī, ‘Iqd al-ğumān fi tārīh ahl al-zamān**, ց. 3, bi-tahqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Qāhira, 1989, ց. 400-402: Իսկ ըստ «Գործի կիպրացց» երկի՝ հայոց արքան, զգուշանալով Մամուլքյան իշխանությունների հակազդեցությունից, սկզբում չի համարձակվել ընդդիմանալ իր երկրի տարածքով Սուլամիշի և մամուլներից վերջինիս ստացած 1000 հոգանոց հեծելազորի անցմանը, բայց երբ վրա են հասել Ղազանի ուղարկած պատժիչ զորախմբերը, հայերն արդեն սկսել են ավելի վստահ գործել: Սուլամիշն ու նրա զորախումբն անգոր են եղել դիմադրել, և շուտով ամբողջությամբ գերեվարվել ու սպանվել են: Տե՛ս **Les gestes des Chipriots**, p. 297-298, *ինչպես նաև Deeds of the Cypriots*, p.

Հայկական, ինչպես նաև արաբական մատենագրությունների մեջ հիշատակված մեկ այլ դրվագ հավասարապես վերաբերում է ինչպես հայ-մամլուքյան, այնպես էլ հայ-մոնղոլական հարաբերություններին: Խոսքն իր խնամակալներ Օշին պայլի և Կոստանդին Գունդստաբլի հանդեպ հայոց Լևոն Գ արքայի՝ 1329 թ. տեսած արյունալի հաշվեհարդարի և դրան հաջորդած մի քստմենելի արարքի մասին է, երբ առաջինի կտրված գլուխը որպես նվեր ուղարկել էր սուլթան ալ-Նասիր Մուհամմադին, երկրորդինը՝ Իրանի Աբու Սաիդ իլխանին. «Ի ՉՀԹ թվին առաքեաց թագաւորն Լեւոն գօրս ի յԱւանոյ եւ ըմբռնեաց զՕշին՝ Տէրն Կօռիկօսու, եւ զեղբայր նորին զԿոստանդին գունդստապլն, եւ եսպան ի սադրելոյ իշխանացն եւ ի funi արանց, եթէ խորհեալ են բառնալ զԲեգ եւ ինքեանմ թագաւորել, եւ առաքեաց զՕշինն գլուխն ի Մըրս՝ առ Մելիք Նասր սուլտանն, եւ զեղբօր նորին՝ յԱրեւելս՝ առ Բուսայիա դանն...»<sup>58</sup>:

Յավոք, նվիրաբերման մասին հիշատակություններից զատ՝ հայկական, իլխանական և այլ օտար աղբյուրները տեղեկություններ չեն հաղորդում մոնղոլական ուրդուում ո՛չ հայ դեսպանների ընդունելություն, ո՛չ բուն նվիրաբերման արարողակարգի և ո՛չ էլ հայոց արքունիքում իլխանական դեսպանների ընդունելության վերաբերյալ:

151: Ապստամբության և նրա անհաջող ելքի մասին ավելի մանրամասն, տե՛ս C. M. D'Ohsson, *Histoire des Mongols, depuis Tchinguiz-Khan jusqu'à Timour Bey, ou Tamerlan*, t. 4, La Haye-Amsterdam, 1835, p. 200-203, H. H. Howort, *History of the Mongols, from the 9<sup>th</sup> to the 19<sup>th</sup> century*, Part. 3 (The Mongols of Persia), London, 1888, pp. 427-428, A. J. Boyle, “Dynastic and Political History of the Īl-Khāns”, in *Cambridge History of Iran*, vol. 5 (The Saljuq and Mongol Periods), ed. by J. A. Boyle, Cambridge, 1968, p. 386, Cl. Cahen, *La Turquie*, p. 293, A. D. Stewart, *The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of He'tum II (1289-1307)*, Leiden, 2001, pp. 128-136: Հայերի ձեռնով Սուլամիշի բռնվելու Ա. Բոյլեի պնդման սկզբնաղբյուրը չգտնելով՝ Ա. Սոյուարտը գրում է, թե նա հաստատապես որևէ պարսկական աղբյուրի է հետևում: Տե՛ս A. D. Stewart, *The Armenian Kingdom*, p. 135, n. 313:

<sup>58</sup> Սամուել Անեցի և Շարունակողներ, *Ժամանակագրություն*, էջ 275-276 (դրված է 1330 թվականի տակ): Հմմտ. ՄԺ, հ. Ա, էջ 88, Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Փարիզ, 1859, էջ 131, Հեթում Պատմիչ Կոռիկոսցի, *Ժամանակագրություն*, էջ 58, Abū al-Fidā', *Al-Muhtasar*, ց. 2, 449, ինչպես նաև Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին (Յակուտ ալ-Համավի, *Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ*), կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 247-248, 286-287, Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, հ. Բ, էջ 401-404:



GAGIK DANIELYAN

**OFFICIAL CORRESPONDENCE AND DIPLOMATIC  
GIFTS IN THE ARMENIAN-MONGOL RELATIONS  
(PART 3)**

**Keywords:** Cilician Armenia, The Mongol Empire, Mongol Ilkhanate of Iran, investiture, yarliq, paiza, diplomatic gifts.

The third part of the article focuses on the diplomatic gifts and presents exchanged between the Mongol and Armenian sovereigns. In this case, our main source of information is Armenian historiography, although a number of interesting reports are also found in Arabic, Persian and Syriac historiographic sources of the time.

ГАГИК ДАНИЕЛЯН

**ОФИЦИАЛЬНАЯ ПЕРЕПИСКА И ДИПЛОМАТИЧЕСКИЕ ДАРЫ В  
АРМЯНО-МОНГОЛЬСКИХ ОТНОШЕНИЯХ  
(ЧАСТЬ 3)**

**Ключевые слова:** Киликийская Армения, Монгольская империя, монгольский Ильханат Ирана, инвеститура, ярлык, пайза, дипломатические дары.

Третья часть статьи посвящена дарам и подношениям, которыми обменивались монгольские и армянские государи. В данном случае нашими основными источниками информации являются памятники армянской историографии, хотя ряд интересных сообщений встречается также в арабских, персидских и сирийских исторических источниках того времени.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

### Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

### Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան ..... 22

### Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները  
հայ-մոնղոլական հարաբերություններում ..... 40

### Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ  
առևտրում ըստ Ժ.-ԺԴ. դարերի պարսկական և արաբական  
պատմաաշխարհագրական երկերի ..... 60

### Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

### Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի  
հրատարակման նախապատմությունը..... 83

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը ..... 93

### Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի  
գրավոր աղբյուրները..... 113

### Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցիև և նրա  
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

## ԱՐՎԵՍ

### Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակներ  
հայկական մանրանկարներում..... 166

### Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

### Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի  
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

### Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

### Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը ..... 268

### Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների  
գործունեության մասին ..... 295

### Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական  
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և  
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների և գրադարանային  
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը ..... 321

### Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր և  
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) ..... 330

**Հերմինէ Գրիգորեան**

Յուցակ կիսաբունի կիպլէնկէան թանգարանի հայերէն ձեռագրերի ..... 350

**ԲԱՆԱՎԵՃ****Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում ..... 377

**ՀԱՂՈՐԴՈՒՄ****Մանեա Էննա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը ..... 420

**ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ****Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) ..... 432

*ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ*

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ ..... 438

---

## CONTENTS

### HISTORY

#### **Azat Bozoyan**

The Role of Antioch in the Policy  
of Levon the Magnificent .....5

#### **Karen Matevosyan**

Anticatholicos Anania of the Sultanate of Rum .....22

#### **Gagik Danielyan**

Official Correspondence and Diplomatic  
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

#### **Elina Ghazaryan**

The Role of South Caucasian Towns  
in Transit Trade According to the Persian and Arabic  
Historico-Geographical Works of 10<sup>th</sup>-14<sup>th</sup> Centuries.....60

#### **Georgi Mirzabekyan**

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

#### **Haykaz Hovhannisyan**

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory  
of the Publication of the Journal “Nortern Lights”.....83

### PHILOLOGY

#### **Davit Gevorgyan**

The Translational Movement Initiated by Grigor II V kayaser.....93

#### **Donara Karapetyan**

The Written Sources of Asar Sebastats‘i’s  
*Book of Medical Art*.....113

#### **Anna Ohanjanyan**

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs  
of Mush and his Book *Key of Truth*.....131

### ART

#### **Avet Avetisyan**

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*  
in Armenian Miniatures.....166

**Seda Manukyan**

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

**Anna Arevshatyan**

Observations on the melodic thinking in  
the monodies of the Liturgy in the arrangements  
by Makar Yekmalian and Komitas..... 212

**PUBLICATIONS****Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and  
His Newly Discovered Poems..... 233

**Lusine Tumanyan**

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘..... 268

**Hasmik Kirakosyan**

A Recently Discovered Document about the Activity  
of Evangelical Missionaries in Shushi..... 295

**Mihran Minassian**

A Previously Unpublished List of Diocesan Villages of the  
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,  
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries  
of Pasen and Takht (1861–1866)..... 305

**BIBLIOGRAPHY****Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of  
Handwritten Remarks and Library Notes in  
Armenian Early Printed Books..... 321

**Tatevik Manukyan, Knarik Sargsyan**

Handwritten and Library Notes of Early Printed Books  
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

**Hermine Grigoryan**

Catalogue of the Armenian Manuscripts of the  
Gulbenkian Museum in Lisbon..... 350

**DISCUSSION****Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

**REPORT****Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies.....420

**OBITUARY****Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

## СОДЕРЖАНИЕ

## ИСТОРИЯ

<b>Азат Бозоян</b>	
Роль Антиохии в политике Левона Великого.....	5
<b>Карен Матевосян</b>	
Антикатоликос румского султаната Анания.....	22
<b>Гагик Даниелян</b>	
Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3).....	40
<b>Элина Казарян</b>	
Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков.....	60
<b>Георгий Мирзабекян</b>	
Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г. ....	74
<b>Айказ Оганесян</b>	
Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”.....	83

## ФИЛОЛОГИЯ

<b>Давид Геворгян</b>	
Переводческое движение, начатое Григором II Вкаясером.....	93
<b>Донара Карапетян</b>	
Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”.....	113
<b>Анна Оганджян</b>	
Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины».....	131

## ИСКУССТВО

<b>Авет Аветисян</b>	
Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах.....	166
<b>Седа Манукян</b>	
Образчик брнашенской школы миниатюры.....	199
<b>Анна Аревшатян</b>	
Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмаляна и Комитаса.....	212



## ПУБЛИКАЦИИ

### **Ани Аракелян**

Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233

### **Лусине Туманян**

Гандзы и таги Ованеса Бргутенца ..... 268

### **Асмик Киракосян**

Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши ..... 295

### **Мигран Минасян**

Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

## БИБЛИОГРАФИЯ

### **Геворг Тер-Варданян**

Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах ..... 321

### **Татевик Манукян, Кнарик Саргсян**

Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330

### **Эрмине Григорян**

Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне ..... 350

## ДИСКУССИЯ

### **Нарине Варданян**

История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов? ..... 377

## СООБЩЕНИЕ

### **Манеа Эрна Ширинян**

XXIV всемирный конгресс византинистов ..... 420

## НЕКРОЛОГ

### **Назени Гарибян**

Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432

**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**Հատոր 34**

**BULLETIN OF MATENADARAN**

**Volume 34**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**Том 34**

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝  
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

[publishing.matenadaran@gmail.com](mailto:publishing.matenadaran@gmail.com)

Ամսագրի քվային տարբերակը՝

[banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/](http://banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/)